ԻՆՏԵՐՆԵՏԻ ԼՐԱՀՈՍԻՑ*

ՋՈՒՐԸ ԵԱՔԸ ԳՏԱՎ

(«ԱԿՕՍ», 14.10.2005, թիվ 498)

Սույն հոդվածը Հրանտ Դինքի՝ Ստամբուլում հայկական կոնֆերանսի ներկայացրած ոչ գիտական զեկույցի լրիվ տեքստն է:

Այս առավոտ ինձ և գիտական ընկերներից պրն. Մուստաֆային հրավիրեցին հեռուստաստուդիա՝ ուղիղ եթեր: Հարցրին, թե ինչպե՞ս եմ գնահատում կոնֆերանսը, ես էլ լրջորեն պատասխանեցի: Եթե չեմ սխալվում պրն. Մուստաֆան հակառակ տեսակետը պաշտպանողներից է, նա ևս արտահայտեց իր մտքերը:

Հանկարծ հաղորդավարը ինձ նախապատվություն տալով հարցրեց այն, ինչ չէր հարցրել պրն. Մուստաֆային:

«Իբրև հայ ինչպե՞ս եք գնահատում Թուրքիայում ապրելը»: Լուրջ հեռուստաալիքը, անլուրջ հարց է տալիս: Բառացի չեմ հիշում, թե ակամայից ինչ ասացի: Ապա, մտածեցի. «լավ է, որ այդ պատասխանը տվի» ու այսօր իմ ոչ գիտական զեկույցը կաշխատեմ բովանդակել այդ պատասխանի շրջանակներում:

Իմ պատասխանը այսպիսինն էր:

«Շատ լավ... բոլորին խորհուրդ եմ տալիս»:

* * *

Իրոք կամքիցս անկախ պատասխան էր: Որովհետև այդ «բոլորը» նաև վախ, սպառնալիք և խուսափումներ է պարունակում, այնուամենայնիվ ասում եմ. «լավ է, որ այդպես պատասխանեցի»:

Ապա նստեցի ու մտածեցի. «Հարկավոր է այսօր կիսվեմ բարեկամներիս հետ»: Հետևաբար իմ զեկույցը կլինի ոչ գիտական...

Բայց ինչ արած, որ վերնագիրը մի քիչ հնչուն է.

«Հայ ինքնությունում նոր նախադասություններ»...

Իհարկե սույն պնդումը բովանդակելու չափ նյութեր է պարունակում: «Նոր» ասելով նկատի ունեմ այսօրվանն և մեկ դար առաջվանը...

Ավելի վաղ շրջանի ինքնության մասին խոսել չեմ ցան-

---

* Տեղեկատվությունը վերցված է ինտերնետի թուրքական կայքերից:

կանում, որովհետև ժամանակս չի բավականացնի: Բայց «ինչպիսի՞ք են 90 տարի ի վեր հայ ինքնության նախադասությունները»: Սրանք պետք է առանձնացնենք, որովհետև հենց այս պահին, այս «նախադասությունները» գրող մարդիկ են իմ դեմ, և 90 տարի է հայերը չեն գրում հայ ինքնության «նախադասությունները»: Դրանք անձամբ թուրքերը, քրդերը կամ ուրիշ էթնիկական տարրեր են: Այսինքն ովքեր այս պատմությունն ապրեցին միասին...

* * *

Երեկվանից «ցեղասպանություն» բառի շուրջ քննարկումներ են ընթանում: Բասքըն Օրանի և Թաներ Աքչամի Երևանից մնացած հաշվեհարդարն այստեղ էլ ներթափանցեց:

«Հումանիտար գիտություններում կա՞ ցեղասպանության սահմանումը, թե՞ դա իրավաբանական տերմին է»:

Իրականում դուք շարունակեք սույն բանավեճը, այստեղ ոչ մի վատ բան չկա, բայց հետևում կա մի ուրիշ բան, թե ինչպե՞ս է դա ընկալում դրա ետևում կանգնած մի ահռելի ժողովուրդ և որ խնդրո առարկա բառն ինչքա՞ն է յուրացրել:

Կա հայ ժողովուրդ՝ աշխարհով մեկ սփռված, և կա նրանց յուրացրած, պատմություն դարձած մի հասկացություն: Քաղաքավարությունից ելնելով չասեմ տերմինը... անունը հետո դուք կդնեք...

* * *

Փիլիսոփայության մեջ գոյություն ունի մի սահմանում.

«Կենդանու և կենդանու գոյակցությունների միջև հարաբերությունները հենց ինքը՝ կյանքն է»: Կյանքը սրա անունն է: Սա բոլոր կենդանիների համար է ինչպես բույսերի, անասունների, նույնպես էլ մարդկանց համար էլ նույնն է: Կենդանին գոյություն ունի իր կենսատարածքով ու դրանից դուրս գոյություն չունի: Եթե դուք դրան անգամ ոսկյա ափսեով տեղափոխեք մի այլ վայր, դուք կտրում եք նրա կապը կենսատարածքի հետ, նշանակում է արմատախիլ եք անում: Սա է սրա անունը: Այո արտագաղթը (tehcir) այնպես, ինչպես աշխատում եք բացատրել, սրա նման մի բան է: 3000 տարի է այս հողերում ապրող, այս հողերում մշակույթ, քաղաքակրթություն ստեղծող մարդիկ այլևայլ պատճառներով կտրվեցին իրենց ապրած հողերից, ցաք ու ցրիվ եղան աշխարհով մեկ: Արդյունքում՝ մահացողներ, մնացողներ և ցաք ու ցրիվ եղողներ...

Հիմա դուք չեք կարող չեղյալ համարել այս ժողովրդի մինչև այսօր հասած սերունդների հոգեբանությունը, և եթե դա է բովանդակում 90 տարվա իր «ինքնության նախադասությունը» արմատախիլ անելը, Դուք չեք կարող ասել. «Բայց սրա անունը թող սա լինի, դա չլինի»: Սա ընկալված, յուրացված և այլևս գրանցված է գենետիկ հիշողության մեջ:

Սրա անունը ի՞նչ է: Թող իրավաբանությունը զբաղվի: Մեզ համար անունը կարևոր չէ, բայց սա այն է, ինչ-որ մենք ապրում ենք:

* * *

Տեսե՛ք, այս հոգեվիճակը հայ ինքնության այսօրվա ընկալման հստակ բացատրությունն է: Խոսում եմ հայ աշխարհի մասին: Այսօր նրա ազգաբնակչությունը հասնում է 8 միլիոնի: Հայերի միայն 2,5-3 միլիոնն է ապրում Հայաստանում: Այս պատկերի իմաստն այն է, որ նրանք դեռ գոյապայքարի մեջ են, ունեն նման մտահոգություն, ու նման մտահոգություն չունեցող մարդիկ դժվար թե հասկանան այս իրավիճակը: Եթե մի մարդ նորմալ չի ապրում, նրա առօրյա կյանքն ուղղված է գոյապայքարին, աշխատում է չսպառվել. ահա սա է հայ ինքնության իսկական պատկերը:

Ամիսներ առաջ գնացի Երևան, կոնֆերանս էր կազմակերպվել աշխարհի չորս կողմերից եկած հայերով: Երևանի փողոցները վերածվել էին Բաբելոնի: Ուրուգվայերեն, արգենտիներեն, պերուերեն, անգլերեն, արաբերեն, հնդկերեն խոսող անհավատալի մի լեզվային հարստություն էր և 90 տարի առաջ նման բան չիմացող մի ժողովուրդ այսօր չգիտե թե ինչպես օգտագործի հայերենը, այսինքն իրար հետ շփվելիս չի կարողանում իր լեզուն օգտագործել: Ես աշխատում եմ ձեզ պատմել մի ժողովրդի ապրած ողիսականը: Ահա սրանք են հայ ինքնության այժմյան վիճակում նոր ձևավորվող նախադասությունները:

* * *

Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանն ապրիլի 24-ին բանախոսեց Երևանում կազմակերպված ցեղասպանության կոնֆերանսում: Ես խորհուրդ կտամ, որպեսզի ձեռք բերեք այդ տեքստն ամբողջությամբ: Նրա խոսքն արտահայտում էր համայն աշխարհի հայության հոգեվիճակը: Նա սկսեց իր խոսքն հետևյալ կերպ. «Ես դիմում եմ իմ թուրք գործընկերներին ու մի կողմ եմ դնում իմ քաղաքական անձնագիրս և ես հիմա ուզում եմ խոսել ձեզ հետ ինչպես մարդը՝ մարդու հետ»: Շատ իմաստալից էր նրա խոսքը ինձ համար, որովհետև իրոք շեշտում էր իր ցանկությունը. «Թողեք ամեն ինչ, եկեք այս հարցին նայենք մարդկայնորեն, խոսեք մարդավարի»: Նա հստակ դնում էր իր սպասումը:

Սա էլ է ապացուցում, որ հայ աշխարհի ինքնությունը վճռողները իրենք չեն, սա իրականացնում են թուրքերը: Սա շատ հստակ իրավիճակ է: Սա մի կողմից լավ է, մի կողմից էլ վատ:

Ես իմ հոդվածներում կոչ եմ անում հայերին. «Դուք առկախված մի մնացեք, և թուրքը ձեզ կհասկանա, դուրս եկեք այս հոգեվիճակից, այս հոգեվիճակը լավ չէ»:

Բայց սա գրոշ չարժե:

Քիչ առաջ զեկուցողներից մեկը խոսեց նավի վրա իրեն ուղղված հարցումների մասին, նավի ճանապարհորդներն իրեն հարցրել են թե կոնֆերանսում ի՞նչ թեմաներով է խոսվել: Միայն նրա՞նք: Կոկորդս չորացավ երեկվանից Հայաստանի թերթերին և հեռուստալիքներին պատասխանելիս: Բոլորը հարցնում են. «Ի՞նչ եղավ, ի՞նչ խոսվեց»: Այո, այս հետաքրքրությունն իրականում հստակ ցույց է տալիս հայ ինքնության ներկա հոգեվիճակը:

Սույն կոնֆերանսն ինձ համար կարևոր է: Ապրում եմ Թուրքիայում և

թուրքահայ եմ: Այսպիսով կոնֆերանսը ընկալում եմ երկու ձևով: Առաջինը՝ այն ընդունում եմ իբրև Թուրքիայի ժողովրդավարացման գործընթացի բաղկացուցիչ տարր: Թուրքիան սույն կոնֆերանսով կարևոր մի շեմից անցավ: Երկրորդը՝ հայ աշխարհի հոգեբանության հետ սերտ առնչվել եմ և այս կոնֆերանսի առնչությամբ կարևորում եմ նրանց գաղափարները ևս: Կա նաև Սփյուռք, որը թուրքերին ընկալում է ինչպես թողել է 1915թ. պայմաններում: Նրանք ասում են թե թուրքերը և Թուրքիան չի փոխվի: Այս երկու տեսանկյունից էլ ուզում եմ առաջընթաց գրանցել:

Հայերը չեն լավանա մինչև Թուրքիայում չտիրի ժողովրդավարություն: Սա շատ հստակ է: Սրանք երկվորյակների նման են: Երկվորյակներից մեկը վիրաբուժական սեղանին գործողություն է անցկացնում, իսկ մյուսը նրա համար մտահոգվում է: Ահա այսպես են զգում: Այս պատճառով ես կասեմ. «Հայերն ու թուրքերը իրար հետ հարաբերությունների տեսանկյունից երկու կլինիկական դեպքեր են»: Մեկն ի պարանոյայով, իսկ մյուսը՝ վնասվածքով: Սա ճիշտ գնահատական է:

* * *

Ինչպես պետք է լինի լուծումը...

Սա դժվար հարց է...

Երեկ մի տիկին խոսքս սկսելիս ծափահարելով բողոքեց մեկ նախադասությունով. «Խոսում եք մարդկանց մահվան մասին, իսկ չեք խոսում օսմանցիների կորցրած հողերի մասին»: Մեջտեղ բերեց մարդկային և հողային կորուստը նույնացնող հասկացությունը:

Հարկավոր է մի բան լավ իմանալ: Քիչ առաջ ձեզ պատմած այդ ցեղասպանությունից... պատմեցի եղած-չեղածն ինչ-որ հասկանում և ընկալում ենք: Արմատախիլ են արվել, որովհետև սա մի այնպիսի արմատ է, որի արմատները գնում են հողի խորքը, ու կբարձրանան երկնքից վերև: Մենք խոսում ենք Թուրքիայի տեսանկյան և այն արմատախիլ արված մարդկանց մասին, որոնք 3000 տարի է ապրում են այս հողերում:

Մի պատմությունով վերջացնեմ, որն անձամբ ապրել եմ և ամեն տեղ էլ կրկնում եմ: Սեբաստիայի շրջաններից զանգեց ծեր մի մարդ: Ասաց. «Տղա ջան, քեզ փնտրեցինք, գտանք, այստեղ մի ծեր կին կա, հավանաբար ձեզանից: Կինը աստվածային հանգստի արժանացավ: Եթե գտնես բարեկամներին, ուղարկի, թող տանեն կամ էլ մենք այստեղ մեր նամազով թաղենք»:

Ասացի. «Շատ լավ՝ հորեղբայր ջան»: Ասաց կնոջ անուն ազգանունը՝ տիկին Բեատրիս անունով մեկը, 70 տարեկան: Ֆրանսիայից արձակուրդի համար էր գնացել այնտեղ:

Փնտրեցի, 10 րոպեում գտա ազգականներին, ի վերջո շատ քիչ ենք ու իրար ճանաչում ենք:

Գնացի իրենց խանութ. «Ճանաչո՞ւմ եք նման մարդու»: Խանութում միջին տարքով մի կին թեքվեց ու ասաց. «Այո, իմ մայրն է» ու պատմեց, թե արձակուրդի է գնացել Սեբաստիա:

Աղջկան պատմեցի վիճակը, նա էլ գնաց:

Հաջորդ օրը հեռախոսով զանգեց, գտել ու ստուգել էր, որ մայրն է ու

հանկարծ սկսեց լալ: Խնդրեցի, որ չլացի ու հարցրի թե դիմ բերելո՞ւ է, թե ոչ:

«Եղբայր,- ասաց,- ես բերելու եմ, բայց այստեղ մի հորեղբայր կա, մի այլ բան է ասում»: Եվ այդ ասելով ու լացելով հեռախոսը փոխանցեց այդ մարդուն:

Բարկացա հորեղբոր վրա ու հարցրի թե ինչո՞ւ է լացացնում աղջկան: Ասաց. «Տղաս, ոչ մի բան չասացի... Մայրդ է, քոնն է, բայց որ ինձ հարցնես՝ թող մնա այստեղ թաղվի... ջուրը ճաքը գտավ»:

Ահա այդ պահին ես հանձնվեցի: Անատոլյան մարդու արտահայտած այս արտահայտությունը, այս ընկալումը ինձ համոզեց: Այո, ջուրը ճաքը գտել էր:

Ճիշտ է տիկին, հայերն այս երկրի հողերի վրա աչք ունեն:

Այն ժամանակ գրածներս նորից կրկնեմ: Այն ժամանակ նախագահ՝ Դեմիրելն ասում էր. «Հայերին երեք քարի կտոր անգամ չենք տա»: Ես էլ այս տիկնոջ պատմությունը գրելով ասել էի թե.

«Այո, մենք հայերս աչք ունենք այս հողերի վրա, որովհետև մեր արմատներն այստեղ են, բայց մի մտահոգվեք ոչ թե այս հողերը առնելու և տանելու, այլ այս հողերի տակը մտնելու համար...»

Շնորհակալություն...

Թարգմանությունը՝ ԿԱՅԾԱԿ ՄԱՐՄԱՐՅԱՆԻ